



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

**ՎԵՐԱՅԱՅՏՆՈՒՄԾ ԳԻՐՔԻ ՄԸ ՆՈՒԻՐՈՒՄԾ
 ԱՊՐԻԼԵԱՆ ԶԵՌՆԱՐԿ**

Մօտակայ կամ հեռուոր անցեալին կորսուած արժեքաւոր առարկայի մը կամ գիրքի մը վերայայտնութիւնը անպայման որ զգայացունց բան է, մանաւանդ երբ անկէկա ապրողներս կը կամրջէ մեր պատմութեան ճակատագրական մէկ ժամանակաշրջանին հետ:

Յառաջիկայ Կիրակի, 30 Ապրիլի երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ, երեկոյեան ժամը 6-ին, մեր ժողովուրդը հրաւիրուած է հազուադէպ ժամադրութեան մը՝ պատմութեան անցած դէմքի մը գրաւոր մէկ ժառանգութեան հետ կամուրջ հաստատելու իմաստով:

Արդարեւ, Արեւմտեան մեր Թեմի Ազգային Առաջնորդարանի Յանրային Յարաբերական Յանձնախումբը կազմակերպած է Ապրիլեան ձեռնարկ մը, որուն ընթացքին պիտի ներկայացուի ճափոնի մօտ Յայաստանի անդրանիկ Յանրապետութեան դեսպանին՝ Տիկին Տայանա Աղաբէկ Աբգարի վերագտնուած մէկ գիրքը, “From the Book of One Thousand Tales; Stories of Armenia and its People, 1892-1922” խորագրով, որ հանդիսականները հաղորդակցութեան մէջ պիտի դնէ մեր ժողովուրդի դառն տարիներուն՝ Տեղասպանութիւնը կանխած ու նոյնիքն Տեղասպանութեան տարիներու իրադարձութեանց մասին նոյն այդ օրերուն արձանագրուած գրաւոր արտայայտութեանց հետ:

Գիրքին ներկայացումը պիտի կատարուի Ապրիլեան յայտագիրի մը ընդմէջէն: Ձեռնարկը կը վայելէ հովանաւորութիւնն ու նախագահութիւնը Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի: Յայտագիրին վրայ տեղ ունին բանախօսութիւն, սրտի խօսք ու գեղարուեստական յայտագիր, ինչպէս նաեւ Տայանա Աբգարի գրական մէկ ժառանգութեան ներկայացումը, նոյնիքն անոր թոռնիկին՝ Լիւսիլ Աբգարի կողմէ:

Գիրքին խորագիրը, ինչպէս նկատելի է, ինքնին պերճախօս է, անոր բովանդակութեան մասին յաւելեալ բացատրութիւններ անհրաժեշտ պիտի չըլլային, եթէ... չըլլային հետեւեալ ուշագրաւ պարագաները:

Տայանա Աբգար պաշտօնավարած է մօտաւորապէս երկու տարի. անկախ դիւանագիտական իր հանգամանքէն՝ ճափոնի մէջ եղած է գրական դէմք, հրատարակած է բազմաթիւ հատորներ, որոնք օրին արժանացած են գնահատանքի (ան մահացած է 1937ին): Անոր բնական շէնքը 20-ական տարիներու սկիզբը փուլ եկած է երկրաշարժի մը հետեւանքով, փլատակներուն տակ թաղելով շատ բան: Տարիներ ետք, շէնքին փլատակներուն մաքրութեան ընթացքին, վերագտնուած է յիշեալ գիրքին ձեռագիրը, որ ահաւասիկ հրատարակութեան յանձնուած է իր թոռան կողմէ:

Ազգ. Առաջնորդարանի Յանր. Յարաբերական Յանձնախումբը Լոս Անճելըս հրաւիրած է Լիւսիլ Աբգարը, որպէսզի ունկնդիր հասարակութիւնը անձամբ կամրջէ իր մեծ

մօր ապրած ժամանակներուն ու անոր գրական այս ժառանգութեան ու մարդասիրական գործունեութեան, այլ խօսքով՝ մեր պատմութեան ճակատագրական մէկ շրջանէն մասնիկներու հետ:

Յայտագիրի աւարտին, նախատեսուած է զրոյց՝ Լիւսիլ Աբգարի հետ, որ նաեւ հիւրասիրութեան պահուն պիտի մակագրէ գիրքէն օրինակներ:

PRELACY P. R. COMMITTEE ORGANIZES A BOOK PRESENTATION

The Western Prelacy Public Relations Committee, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, has organized a book presentation event to be held on Sunday, April 30, at 6:00 p.m. at the “Armenak Der Bedrossian” Hall of St. Mary’s Church in Glendale. The book that will be presented was a lost manuscript of Diana Apcar, Ambassador of the Republic of Armenia to Japan during the first Armenian Republic (1918-1920), titled “From the Book of One Thousand Tales, Stories of Armenia and its People, 1892-1922”. The manuscript was found and published by Lucille Apcar, granddaughter of Diana Apcar, who will make the presentation.

Diana Apcar, besides her diplomatic career, was a renowned writer and author of several books. In the 1920’s, the building she lived in collapsed due to an earthquake and the manuscript for the aforementioned book was lost in the rubble. Many years later, the manuscript was found and her granddaughter Lucille Apcar published it into a book.

The Western Prelacy Public Relations Committee has invited Lucille Apcar to Los Angeles to present her grandmother’s recovered manuscript and to tell the public more about her grandmother’s role in and service to the Armenian Community from the far away land of Japan.

Following the official program there will be a reception and book signing.